

ԵՎՀՅՅԱՐԱԿԱՆ ԳԻՒՂԸ

VII

Որեէ կրկրի քաղաքակրթութեան աստիճանը շատ չափեր ունի, սիրելիս, բայց ըստ իս լաւագոյն չափը պոստային կանոնաւոր հազորդակցութիւնն է: Սյն բոլորից յետոյ, ինչ ես ասիթ ունեցայ քեզ գրելու Շվեյցարիայի և մասնաւորապէս այս երկրի գիւղական կարգերի մասին, կարծում եմ, այլ ես քեզ չեմ զարմացնի, եթէ անեմ, որ պոստային կազմակերպութիւնն այստեղ օրինակելի է: Ոչ միայն շվեյցարական քաղաքներում, այլ հեռաւոր գիւղերում պոստային գործն այնպէս է գրուած, որ նա կարող է եւրոպական շատ քաղաքակիրթ երկրների համար օրինակելի համարուել: Շրջիր Շվեյցարիայում որքան կամենաս, անցիր գէպի ժիւրա լեռնաշղթան, դարձիր գէպի Ալպերը, ներս թաղուիր խուլ լեռների ձորերում, ապրիր թէկուղ հովիւների մենաւոր խուղերջում (chalet), զնա ամենահեռաւոր գիւղերը, լեռնային լճերի ափերում թափառիր օրերով, օտար լինես, թէ տեղացի, այդ միենոյն է, եթէ գու կամենաս, քո նամակները քեզ կը հետենն քայլ առ քայլ ամեն տեղ: Սյս հանգամանքը ինձ, արևելքի կարգերի գառնութիւնը ճաշակածիս՝ այնպէս է գրաւում այստեղ, որ ես մի առանձին հաճոյք եմ զգում այսաեղի հեռաւոր գիւղերում ստանալ հայրենիքից եկած նամակները, որոնք շատ անգամ ամբողջապէս ծածկուած են լինում գըրուած և ջնջուած հասցէներով, խոկական նշան, թէ նամակը շատ է թափառել, թէ բազմաթիւ թղթատարներ ձեռքէ ձեռք են անցրել՝ գտնելու տիրոջը, որը թափառում է շվեյցարական լեռներում ու գիւղերում:

Գիւղական պոստը Շվեյցարիայում, գա բոլոր օտարականների, տուրիստների հիացմունքի առարկան է եղել: Սպիտակ

խճուղին գալարւում է կանաչ լեռնալանջի վրայով, իջնում է դէպի ձորակը, կորչում է խուլ անտառների մէջ, յայտնուում է լեռան կատարին, կրկին ծածկում է ձորերի մէջ, և այդ ճանապարհով անցնում է երկձի կառքը հնչիւն զանգակներով: Նրա վրայ մի մարդ է նստած, մի հատիկ մարդ՝ կառապանը. կառչուշուկէ զլիսարկը զլիսին և կապոյտ մահուցէ բլիւզով, եթէ զով է, և սպիտակ քաթանէ շապկով, եթէ ամառ է. անա գիւղական պոստը բերող կառքը: Նա շրջապատուած չէ ձիաւոր պահակներով, նոյն իսկ մի հատիկ մարդը վրան ուրիշ գէնք չ'ունի, բացի իր ձեռքի մարակից, բայց այդ նրա փոյթը չէ, ճանապարհները բոլորովին ասլանով են անգամ ուշ գիշերով, վատ եղանակներին: Փոքրիկ զանգակների ձայնը հնչում է լեռների և անտառների լութեան մէջ, տարածուում է հեռու ու հեռու, այդքանը բոլորովին բաւական է, որ ամենքն իմանան, թէ այդ մենաւոր կառքով անցնում է Շվեյցարիայի պատիւը. փոքրիկ Դաշնակցութեան մեծ հովանու տակ դա մի սրբութիւն է, և նրան զիսչելը ոճիրներից մեծագոյնն է: Եթէ հեռուից պոստի հովանին նրա զանգակների ձայնն է, մօտիկից էլ Դաշնակցութեան նշանը, այն փոքրիկ անշառք, կարմիր խաչն է, որ փայլում է կառքի կողքին որպէս նուիրական կնիք զրուած անհատների զարդնիքի, կապոցների մէջ գտնուող նամակների և այլ ծամրոցների վրայ:

Օրուայ որոշ ժամերին այդ փոքրիկ սիրոն կառքը այն կարճահասակ ու շիկաներ մարգու հետ անցնում է մեծ ճանապարհով, կանգ է առնում մի քանի բոպէ այս կամ այն գիւղում, տալիս է ինչոր կապոցներ, ընդունում է նորերը և կըրկին շարժուում է առաջ: Մի պահ ընդհատուած զանգակների ձայնը կրկին հնչուում է, և պոստային կառքը Դաշնակցութեան խաչի հովանու տակ գնում է դէպի այլ լեռներ, դէպի այլ գիւղեր: Նա գալիս է մեծ քաղաքներից զիւղական ազգաբնակութեանը պատմելու, թէ ինչ է կատարւում հեռաւոր անկիւններում, ինչ են մտածում, գործում սարդիկ օտար աշխարհներում, ինչ է անցնում դառնում շվեյցարական այլ կանտոններում, այլ գիւղերում, այլ լեռներում: Եւ մի անհրաժեշտ պահանջ է շվեյցարական գիւղացու համար իմանալ այս բոլորը, ահա թէ ինչու այնքան սիրելի է նրա համար կառքը իր զանգի քաղցր հնչիւններով, այնպէս ցանկալի հիւր է ամեն տեղ և այն կառապանը, աշխարհի բաներքը: Այն գիւղում, ուր ես ապրում եմ, սիրելիս, օրական երեք անգամ պոստ է ստացւում կանոնաւոր կերպով, օրական երեք անգամ պոստային ցրիչը, մի նիհար, երկարահասակ աղջիկ թղթերով լեցուն կաշուէ

պարկը կախած ուսից՝ հանգարտ անցնում է գիւղի փողոցներով, մանում է աները, բաժանում է լրագրերն ու նամակները, ապա դուրս է գալիս գիւղից և գնում է դէպի նեռաւոր խըրճիթները. դաշտերում իմ սովորական զրուանքների ժամանակ ես յաճախ եմ հանդիպում այդ թղթատար աղջկան. թեթևաքայլ և լուրջ, իր կատարած գեղեցիկ գերի բոլոր զիտակցութեամբ նա անցնում է դաշտերով մեն մենակ, ծածկում է այս ձորակում, այն բլրի ետեր, այս անտառակալում, ուր մի հատիկ, մենաւոր խրձիթ կայ, որ ստանալու մի բան ունի; Նայում եմ այդ աղջկան, և պատկառանքով է լուսում սիրաս դէպի այդ նիւհար, վիրուն արարածը, որ ներկայանում է իմ աչքին որպէս քաղաքակրթութեան կենդանի խորհրդանշան; Կաշուէ այն փոքրիկ պարկը, թղթերի այն կոյտը, գա ամբողջ աշխարհի մարդկութեան միաքն ու հոգին է; Համամարդկային մեծ ընտանիքի ցան ու ցրիւ անդամների մէջ այդ փոքրիկ աղջիկը ինձ ներկայանումէ որպէս մի գիւթական օղակ, որ այս հեռաւոր ձորերում, և ուներում, անտառներում ապրողներին կապում է այնքան աշխարհների, այնքան աղջերի, այնքան ծանօթների և անձանօթների հետ; Սյապէս է միշտ, սիրելիս, աշխարհի բազրը անօրինող հզօր Փակտօրների կողքին շատ անգամ մի թոյլ, մի փոքրիկ արարած հրաշներ է գործում լուսութեան ու անյայտութեան մէջ. այս փոքրիկ աղջիկը, որ վազվում է գաշտերում խորհրդաւոր կապոցն ուսին, ըստ իս մի այնպիսի երեսյթ է, որի բացարութիւնը կ'ընդգրկէր քաղաքակրթութեան ամբողջութիւնը:

Եւ գա շատ հասկանալի է, սիրելիս, որպէսզի մի երկրում նրա գիւղական աղջաբնակութեան մէջ անգամ պոստը դառնայ անխուսափելի անհրաժեշտութիւն, որպէսզի հնարաւոր գառնայ, որ մի այսպիսի աղջիկ մենակ ու անպաշտպան, ծրաբները շատակած վազգզի լեռներում, հարկաւոր է ոչ թէ տարիների՝ այլ գարերի քաղաքակրթութիւն անցած լինել; Ահա թէ ինչու առում եմ, որ այդ երեսյթի բացարութիւնը քաղաքակրթութեան ամբողջ պատմութիւնն է:

Իմ առաջին այցելութիւնը շվեյցարական գիւղական պոստատանը ես երբէք չեմ մոռանայ: Քիչ անգամ քաղաքակրթական այնպիսի հետաքրքիր, այնքան խոչըր երեսյթ, որպէս պոստն է, կարող է այն աստիճան գեղջուկ, պարզ բնաւորութիւն ըստանալ, ինչպէս այդ պատահել է Շվեյցարիայում: Բոլոր այն նոր պաշտօնական ձևականութիւնները, որոնք խորթ են օրէնքների ողունք և արդինք սոսկ տառակերութեան, որոնք սաշկայն այնպէս խեղդում են ամեն մի կենդանի գործ՝ անվերջ, անօգուտ արդելքներ յարուցանելով կեանքի յառաջադիմող հո-

սամփի դէմ, այստեղ ջնջուած են իսպառ, և մնացել է ինքը գործը, նրա իրական պաշտամունքը հասարակական բարիքի և քաղաքակրթութեան համար:

Սաածիս իրեւ անհերքելի ապացոյց ես կը նկարագրեմ տեսածս պոստատունը գիւղում: Փոքրիկ երեխան ինձ ցոյց է տալիս մի սովորական տուն, ինչպէս շինում են շվեյցարական գիւղական տները: Արտաքուստ ոչինչ չըկայ, որ վկայէ, թէ առաջդ մի հասարակական հաստատութիւն է, բացի պատին կպցրած կապոյտ պոստարկղից:

Բաց բակում մի փոքրիկ քարէ աւաղան կայ, ուր ջուրը թափուում է մի ծորակից: Աւազանի մօտ արեկող արած թաւալում է մի սիրուն կատու նրանից քիչ հեռու մի տարիքաւոր ու յոդնած տեսքով կին լուացք է անուած:

Ես մօտենում եմ և կանգ առնում մտածելով վարանոս:

—Պարոնը երեխ պոստատունն է հարցնում, ասում է լուացք անող կինը ինձ նայելով:

—Այո, տիկին, բարի եղէք, ինսպրեմ ինձ ցոյց տար:

—Համեցէք, հետեւեցէք ինձ:

Բարի կինը թողնում է լուացքը, ձեռներն շտապով սըր-բում է գոգնոցով և առաջ անցնում: Ես հետեւում եմ, ներս ենք մտնում մի փոքրիկ նրբանցք, այստեղ լալիս է մի փոքրիկ երեխայ: Իմ ուղեկցունին նրան հանգստացնում է և ձեռքից բռնած գնում՝ ինձ պատուիրելով սպասել: մի վայրկեան յետոյ իմ առջնի պատի վրայ բացւում է փոքրիկ դռնակը, և ես նայում եմ, պոստատունն է, և լուացարար կինը պոստի կառավարիչն է:

Նայում եմ, մի հատիկ փոքրիկ սենեակ է, մի սեղան, վըրան մարկաններ, ծրաբներ, թղթեր, նրա առաջ մի տաբուրետ, որի հետ խաղում է նոյն երեխան, մերթ ընդ մերթ նայելով մօրը, որ ընդունում է իմ նամակը: Մօտիկ չէնքից, որ մի գոմ է, լուռմ է կոմի բառաչը, կինը մի վայրկեան կանգ է առնում և կանչում է մէկին, և ինքը գուրս գնում: մի գուռ է բացւում խորքում, յայսնուում է մի ջաճիկ աղջիկ, նա իր բանը գիտէ, անխօս մօտենում է սեղանին, շարունակում է մօր սկսածը:

Զըրընդ, զըրընդ... դրսում կանգ է առնելում պոստային կառքը, աղջիկն աճապարելով դուրս է գալիս ընդ առաջ: կառապանը, որ միենոյն ժամանակ պոստային պաշտօնեան է, բարձրաձայն և ուրախ շեշտով բարեւում է աղջկան, առողջութիւնն է հարցնում, մի քանի կօմպլիմենտներ ասում, երկուսով էլ բացսիրտ ծիծառում են:

Ապա հանդարատութեամբ կատարւում է կապոցների վո-

խանակութիւնը, կառքը հեռանում է դէպի ուրիշ գիւղեր, իսկ աղջիկը սկսում է բանալ նոր կապոցները և կարգաւորել: Ես հետուում եմ այդ տեսարանին մի այնպիսի բաց հետաքրքրութեամբ և ուշադրութեամբ, որ քիչ է մնում զարմանք շարժի: Եւ ճըշմարփա՛ ես զարմացած եմ այս բոլորի վրայ, իսկ նրանք զարմանում են երեխի իմ զարմանքի վրա:

Սակայն պէտք չէ կարծել թէ գիւղական բոլոր պոստատըներն այս աստիճան անշուք են, աւելի շուտ սա մի բացառութիւն է, գուցէ և ժամանակաւոր. Կթէ ես նկարազգեցի այն, միայն կարգերի գեղջուկ պարզութիւնը ցոյց տալու համար էր և ոչ եթէ չնորի մասին զաղափար տալու: Ընդհակառակը ամենալաւ շնորհերը շվեյցարական թէ քաղաքներում և թէ գիւղերում պոստատներն են և կրթական հաստատութիւնները: Գիւղերուում իւրաքանչիւր գարոցական մեծ ու շքեղ չնորի մի մասը յատկացւում է պոստին: Այսպիսով գիւղական ուսուցիչը և պոստային միակ պաշտօնեան մի գրաւիչ զուգատիպութեամբ աշխատում են միենոյն շնորհեան մէջ, միենոյն յարկի տակ, որպէս թէ զոյդ ամոներ միենոյն քաղաքակրթական մեծ զործի:

Ուշադրաւ մի երեսոյթ ես, գիւղերում պոստային պաշտօնէութիւնն ասես մի որեէ ընտանիքի սեփականութիւն լինի: Եթէ ընտանիքի տէրը կարգուած պաշտօնեայ է, ապա միւս անդամները նոյն պաշտօնի նեղութիւնները նրա հետ կիսում են հաւասար չափով, նրա պարտքը կատարում են փոխառփոխ: Երբեմն պոստատնը կարեի է տեսնել մի տղամարդ սպիտակ կտաւէ շապկով, մի ժամ յետոյ ձեզ կ'ընդունի նրա կինը, յետոյ տղան, վերջիվերջոյ նաև աղջիկը, նայելով թէ ով է ազատ և ով է զբաղուած: Եւ այս բոլորը կատարում է ամենաբնական եղանակով, ոչ տքի համար սա տարօրինակ չէ, ոչ որ այս հանգամանքը օրէնքի դէմ չէ համարում, տառակերութիւնն այնտեղ անձանօթ է:

Եատ անգամ էլ պոստ ստացողը, կարգագրողը հայրը կամ մայրն է լինում, իսկ ցրիչը, հեռաւոր խոճիթների և ձորերի նամակատարը նրանց փոքրիկ տղան կամ աղջիկն է: Անա թէ ինչու պոստային գործն՝ ինչպէս ասացի իւրաքանչիւր գիւղում դառնում է մի հատ ընտանիքի սեփականութիւն:

Եւ զարմանային այն է, որ այս աստիճան նահապեատական, պարզ կարգերի մէջ, ուր մեծաւորի հակողութիւն ու խրատութիւն չը կայ, ուր ահաւոր վերաբննիչը մրգիկ պէս չէ զալիս անցնում, այնուամենայնիւնք մի անկարգութիւն, ոչ մի գեղջում, ոչ մի անկանոնութիւն ընդհանուր գործավարութեան մէջ: Ոչ ոք առիթ չի ունենայ բողոքելու, թէ իր նամակը կորաւ, թէ

լրագիրը ժամանակին չը հասաւ, ոչ ոք ստիպուած չի լինի գը-
նայ պոստից իր լրագիրը կամ նամակն ստանալու։ Շոգ թէ
ցուրտ, անձրի թէ պարզ եղանակներին միենոյն ցրիչը որոշ
ժամերին իր կապոցը շալակած՝ անցնում է գռնէ դուռ, ձորից
ձոր՝ դաշտից դաշտ, իր պարտը կատարելու։ Փոքրիկ Դաշնակ-
ցութեան ազնիւ պաշտօնեամեր, որոնք խաւարի ու լոռովեան
մէջ հաւատարիմ իրանց երկրի մեծ աւանդութիւններին, ամե-
նափոքը գործի մէջ անգամ իրանց հայրենիքի փառքին են ծա-
ռայում անխարդախ ու շիտակ ընթացքով։

Զը մոռանամ աւելացնել, որ պոստի հետ միասին իւրա-
քանչիւր զիւղում հնարաւոր է նաև նեռագիր ստանալը իսկա-
պէս շատ անդամ բուն նեռագրատուն չը կայ, բայց զիւղը միա-
ցած է մօտակիայ երկաթուղային կայարանի հետ նեռախօսով,
նեռագիրն ստացում այդ կայարանում և այնտեղից հե-
ռախօսով յայնուում է զիւղական պոստին, և ահա նեռագիրը
պատրաստ է։ Այս սիստեմով համարեա իւրաքանչիւր զիւղից
կարելի է նեռագրել աշխարհի որ ծայրը կամենաք։ Այսպէս է
միայն փոքրիկ, աննշան զիւղերում, բայց մեծ զիւղերը ուղղա-
կի նեռագրալարպով են միացած մեծ կենտրոնների հետ։

Նամակիս սկզբում ես ասացի, որ ըստ իս քաղաքակրթու-
թեան լաւագոյն չափը պոստային կանոնաւոր հաղորդակցու-
թիւնն է որեւ երկրում։ Դրա ամենափայլուն ապացոյցը դար-
ձեալ նվեյցարիան է։ Եթէ այս երկրի զիւղական ազդաբնակու-
թիւնը օրական երեք անդամ պոստ է ստանում, այդ այն պարզ
պատճառով է, որ նա կարիք ունի, որ նրա համար դաշտել
է կենսական պահանջ։

Չը և պարտադիր տարրական ուսումը նվեյցարիայի զիւ-
ղական ազդաբնակութեան մտաւոր աստիճանն արդէն այնքան
է բարձրացրել, և ճաշակն այնպէս զարգացրել է, որ քաղաքա-
կրթուած մարզուն յատուկ մի շարք մտաւոր պահանջներ՝ ինչ-
պէս օրինակ ընթերցանութիւնն է։ Նրան անբաժան լայն հե-
ռագրքրութիւնը օտար աշխարհների կեանքով, նրա համար
դարձել են կենսական խնդիրներ։ Մի կողմ թողնելով ընդհանը-
րապէս գործնական կեանքին վերաբերեալ անհրաժեշտ թղթակ-
ցութիւնները՝ չվեյցարական զիւղացին նաև լրագրի այնպիսի
պահանջ ունի, որ ամենօրեայ պոստը դարձել է նրա համար
անխուսափելի։

Երեկ պոստատուն մտայ իմանալու համար, թէ քանի
թերթ է ստացւում այս փոքրիկ զիւղում, ուր հազիւ 20—30
ընտանիք են ազլում։ Եւ ինչ, կարող ես երեակայել իմ դար-
ձանքը, երբ պոստային պաշտօնեան ամենասովորական եղանա-

կով ինձ հաղորդեց, որ Պիգուռում ստացւում են 52 օրինակ զանազան թերթեր և ամսագրեր, Ուրիշ, խօսքով տուն չը կայ, որ մի՛ երբեմն նաև երկու թերթ չը ստանայ: Ես ճանաչում եմ զըրանցից մի քանիքը: Ամենից տարածուածը, մասնաւոսպէս Վօկանտօնում, Լօգանում հրատարակուող «Feuille d'avise»-ն է, մի սովորական յայտարարութեան թերթ, ինչպէս այդ ցոյց է տալիս վերնազբիրը, բայց այնքան բազմակողմանի բովանդակութեամբ, որ բալորովին բոււական է մի գիւղական աղղաբնակովեան հետաքրքրութեանը բաւականութիւն տալու: Նա ամեն օր ունի քաղաքական հեռագրեր աշխարհի բոլոր ծայրերից, քաղաքական լուրեր, քաղուածքներ օտար թերթերից, շվեյցարական ներքին, անտեսական, հասարակական, քաղաքական կեանքին վերաբերեալ յօդուածներ ու լուրեր, կառավարչական հաղորդագրութիւններ, երկրի օրէնսդրութեան վերաբերեալ մանրաման տեղեկութիւններ, թերթեւ ընթեռնելի վէպիկներ և բազմաթիւ ու բազմատեսակ յայտարարութիւններ: Ի պատիւ շվեյցարիայի պէտք է ասել, որ այսպիսի թերթերի տուած բարոյական-մտաւոր սնունդն էլ խիստ առողջ է, և շվեյցարական մամուլը ժողովրդի սիրու և միաքը չէ թունաւորում, հասարակական քաղաքական խոնդիրների վերաբերմամբ թիւրիմացութիւններ չէ տարածում, չէ ստում, չէ խաբում: Ահա թէ ինչու շվեյցարական գիւղացին ճշտի զիտէ ան ամենը, ինչ կատարուում է թէ իր երկրում և թէ իր երկրից զուրա աշխարհի բոլոր ծայրերում, և զիտէ մանրամանաբար, ասլում է ոչ միայն իր հայրենիքի, այլև համամարդկացին հայրենիքի մեծ կեանքով, մեծ ցաւերով ու ուրախութիւններով: Ես երբէք չեմ կարող մոռանալ մի դէպք, որին ականատես եղայ շվեյցարական գիւղում, և որ խորապէս յուզեց ինձ: Ամրան սկզբին հեռաւոր զիւղում յարմար պանսիօն փնտուելով կանգ առայ մի զիւղոցու տան առաջ: Տանտիկինը, որից տեղեկութիւններ էի խնդրում, հետաքրքրուեց իմ ազգութեամբ, ևս մի փոքր շիոթուած մնացի՝ հաստատ համոզուած, որ այս գեղջկուճին այս խուլ լեռներում հայ անունը լսած չը պիտի ինչի, և հետևապէս հարկաւոր է երկար բարակ բացարձել, թէ ինչ ասել է հայ: սա մի հանգամանք էր, որ շատ էլ չէր շոյում իմ ազգային հպարտութիւնը:

—Հայ եմ, ասացի վարանոտ եղանակով:

—Ի՞նչ էք ասում, հայ էք, հայ, ինչդ հայեր, դժբաղդ ժողովուրդ, սուլթանը ձեզ ինչպէս կոտորեց, ախ, Տէր Աստուած, դու ինչու թոյլ առիր, իսկդ հայեր... և բարի կինը ակսեց հեկալ և աչքերը սրբել զոդնոցով, Պարզուեց, որ նա հայոց հար-

ցի վերջին տարիների ամբողջ պատմութիւնը դիտէ իր փոքրիկ թերթից, որ կարդում է երեկոները իր երեխաների հետ, և ինչ ասել կ'ուզի, փոքրիկ երեխաներն էլ զիտեն շատ բան այն քը- րիստոնեայ գժբաղդ ժողովրդի մասին, որին թիւրքերը կոտո- րում են հեռաւոր արեելքում։ Այս երեսյթը մենակ Վօ կանոօ- նում չէ, այլ ամբաղջ Ծվեցցարիայում նոյնն է, ամենքը կարդա- ցել են, ամենքը դիտեն, և նրանց շիտակ, մաքուր մամուլը ոչինչ չէ թագցրել, ոչինչ չէ կեղծել։ Թիւրքական ուկիներն այստեղ ոչինչ չէին կարող անել, արանց բարոյական մաքուրթիւնը մի ժայռ է, որի վրայ կը խորտակուի զայթակղութեան ամեն մի նողկալի փորձ։ Ակամայ միտս ընկաւ ֆրանսիական Le petit journal-ը, որը նոյնպէս մի շատ տարածուած պատկերագարդ թերթ է ամբողջ Ֆրանսիայում։ Հայկական սարսափների ժա- մանակ այս թերթի «ազնիւ» խմբագերներն իրանց ընթերցողներին ուղարկեցին պատկերներ, որոնք ցոյց էին տալիս, թէ ինչպէս հայերը աւերում են թիւրքական մզկիթները և կոտորում են «խեղճ» թիւրքերին։ Ազականուած մամուլի վարիչները աշ- խարհի մեծագոյն ոճրագործներն են։

ՃՎԵՅՑԱՐԱԿԱՆ ԳԻՒՂԻ

ԲՆԿԱՐԴ ԿՈԽՄԲԱԹ-ՀԱՐՈՒՆ